

Հայաստանի տնտեսության վրա տնտեսական ճգնաժամի ազդեցության իրավիճակային գնահատում

Սույն հակիրճ հետազոտությունը նախաձեռնվել և իրականացվել է «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի կողմից **Ի-Վի Քոնսալթինգ** խորհրդատվական ընկերության աջակցությամբ: Հետազոտության նպատակն է՝ բացահայտել տնտեսական ճգնաժամի ազդեցությունը տնային տնտեսությունների, ձեռնարկությունների եւ մակրոտնտեսական համակարգի վրա:

Տնային տնտեսությունների հարցում

Հարցումն իրականացվել է 1000 տնային տնտեսությունների շրջանում Հայաստանի բոլոր մարզերում 2009թ. մարտ ամսին:

Ընտրանքը կազմվել է պատահական ընտրության սկզբունքով և իր կառուցվածքով համապատասխանում է տնային տնտեսությունների բաշխմանը Երևանի և մարզերի միջև: Մարզերում հարցումն իրականացվել է միայն քաղաքային բնակավայրերում:

Ձեռնարկությունների ղեկավարների հարցում

Հարցմանը մասնակցել են Հայաստանում գործող փոքր և մեծ 60 ընկերություններ: Այն անցկացվել է 2009թ. ապրիլ ամսին:

Հաշվի առնելով ընտրանքի չափը՝ արդյունքները չեն հավակնում դիտվել որպես ներկայացուցչական, սակայն կարող են որոշակի մոտարկմամբ ներկայացնել ընդհանուր իրավիճակը, սպասումները և միտումները:

Բովանդակություն

- ❑ **Ճգնաժամի ազդեցությունը տնային տնտեսությունների վրա**
- ❑ **Ճգնաժամի ազդեցությունը մասնավոր հատվածի վրա**
- ❑ **Ճգնաժամի ազդեցությունը մակրոտնտեսական համակարգի վրա**


Ճգնաժամի ազդեցության գնահատում

Տնային տնտեսությունների հարցման արդյունքները


- Հայաստանի բնակչության մոտ 70%-ն արդեն իսկ զգացել է ճգնաժամի բացասական ազդեցությունը սեփական եկամուտների վրա, որը հավասարաչափ է եղել ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում:
- Տնային տնտեսությունների 44%-ի մոտ նկատվել է եկամուտի նվազում, 15%-ի մոտ՝ աշխատավարձի ուշացումներ, 11%-ը հայտնվել են հարկադիր պարապուրդում, իսկ 7%-ը՝ ընդհանրապես կորցրել է աշխատանքը: Այս առումով պատկերը էապես չի տարբերվում Երևանի և բոլոր մարզերի ագրեգացված տվյալների տեսանկյունից:
- Եկամուտների կրճատումը գրանցվել է հիմնականում 11-25%-ի շրջակայքում, ընդ որում կրճատման մակարդակը առավել մեծ է եղել Երևանում, որտեղ հարցվողների մոտ 40% նշել են, որ իրենց ընտանիքի եկամուտները կրճատվել են 26-ից մինչև 50%-ով:
- Տնային տնտեսությունների մոտ 30%-ը պլանավորում են կրճատել կամ հետաձգել կապի, երկարաժամկետ օգտագործման ապրանքների և հանգստի վրա կատարվող ծախսերը:
- Տնային տնտեսությունների 80%-ից ավելին մեծ հավանականությամբ կսկսեն նախապատվություն տալ ավելի էժան ապրանքներին:
- Տնային տնտեսությունների միայն 20%-ն է վստահ, որ ճգնաժամը կհաղթահարվի կարճ ժամանակահատվածում, իսկ մոտ կեսը՝ կանխատեսում է տնտեսության վիճակի առավել վատթարացում:

Արդյոք տնտեսական ճգնաժամը ազդեցություն է ունեցել եկամուտների վրա

Արդյոք տնտեսական ճգնաժամն ազդեցություն է ունեցել Ձեր ընտանիքի եկամուտների վրա




Ինչպիսին է եղել ազդեցությունը Ձեր ընտանիքի վրա




Ճգնաժամի ազդեցությունն ըստ մարզերի


Ճգնաժամի ազդեցությունը Երևանի բնակչության վրա




Ճգնաժամի ազդեցությունը մարզերի բնակչության վրա




Ընտանիքի անդամները կորցրել են աշխատանքը




Հարկադիր պարապուրդի մեջ են հայտնվել




Աշխատավարձի վճարման ուշացումներ



Կրճատվել է աշխատավարձը/եկամուտը




Ընտանիքի ընդհանուր եկամուտների կրճատումը




Ծախսերի կառուցվածքի սպասվող փոփոխությունները

Ընտանիքի ծախսերում նախատեսվող փոփոխությունները

Երևան




Մարզեր




Մպառոդական վարքագծի սպասվող փոփոխությունը

Հավանականությունը, որ գնումներ կատարելիս նախապատվությունը կտաք ավելի էժան ապրանքներին



Սպասումները ձգնաժամի հետագա զարգացումների վերաբերյալ 2009թ. ընթացքում



- ձգնաժամը կխորանա, և դրա բացասական ազդեցությունը կլինի էական Հայաստանի տնտեսության և բնակչության կենսամակարդակի վրա
- ձգնաժամի ազդեցությունն էական չի լինի, քանի որ կառավարությունը կարող է մեղմել դրա ազդեցությունը
- ձգնաժամը կհաղթահարվի մոտակա մի քանի ամիսների ընթացքում, որի համար կան անհրաժեշտ ռեսուրսներ

Բովանդակություն

- ❑ **Ճգնաժամի ազդեցությունը տնային տնտեսությունների վրա**

- ❑ **Ճգնաժամի ազդեցությունը մասնավոր հատվածի վրա**


- ❑ **Ճգնաժամի ազդեցությունը մակրոտնտեսական համակարգի վրա**

Ճգնաժամի ազդեցության գնահատում

Ձեռնարկությունների հարցման արդյունքները

- Հարցման ենթարկված գործարարների 90%-ը նշել է, որ ճգնաժամն արդեն իսկ ազդել է իրենց ընկերության գործունեության վրա, իսկ միայն 5% է կարծում, որ այն ընդհանապես ազդեցություն չի ունենա:
- Ճգնաժամի բացասական հետևանքները ավելի բազմատեսակ են խոշոր և արդյունաբերական ձեռնարկությունների պարագայում:
- Հարցված ձեռնարկությունների շուրջ 70%-ի մոտ հիմնական խնդիրները կապված են եղել վաճառքի ծավալի կրճատման, վճարումների ուշացման կամ չկատարման հետ, իսկ 30-45%-ի մոտ դժվարացել է ֆինանսների ներգրավումը:
- Որպես ճգնաժամին դիմակայման միջոց ձեռնարկությունների գերակշիռ մասը պատրաստվում է կրճատել վարչական ծախսերը և հետաձգել ներդրումների իրականացումը:
- Աշխատակիցների թվի կրճատում են նախատեսում հարցված ընկերությունների 40%-ը, ընդ որում այն ավելի ծավալուն կլինի փոքր և միջին ձեռնարկություններում: Աշխատավարձի կրճատում է սպասվում ընկերությունների միայն 20%-ում, հատկապես արդյունաբերական ընկերություններում:
- Ճգնաժամը նաև ունեցել է դրական հետևանքներ որոշ ընկերությունների համար, հատկապես, մրցակիցների դիրքերի թուլացման, հումքի և սարքավորումների գների անկման տեսակետից:
- Ձեռնարկատերերն առավել վատատես են իրենց կախատեսումներում, և նրանց մոտ 80%-ը սպասում է ճգնաժամի խորացում 2009թ. -ի ընթացքում:

Արդյոք տնտեսական ճգնաժամը ազդեցությունն ընկերությունների վրա




- Տնտեսական ճգնաժամն արդեն ազդեցություն ունեցել է մեր ընկերության վրա
- Ճգնաժամը դեռևս ազդեցություն չի ունեցել մեր ընկերության գործունեության վրա
- Կարծում եմ ճգնաժամը չի ազդի մեր ընկերության գործունեության վրա


Ճգնաժամի ազդեցության բնույթը

Ինչպիսին է եղել ճգնաժամի ազդեցությունը Ձեր ընկերության վրա

Դրական ազդեցություն



Բացասական ազդեցություն





Ինչպիսին է եղել ճգնաժամի ազդեցությունը Ձեր ընկերության վրա



Դրական ազդեցություն

■ ՓՍՁ ■ Խոշոր ընկերություններ

■ Ծառայություններ ■ Արդյունաբերություն



Բացասական ազդեցություն





Ճգնաժամի բացասական հետևանքների նվազեցմանն ուղղված քայլերը

Ինչ քայլեր եք նախատեսում իրականացնել ճգնաժամի բացասական հետևանքները նվազեցնելու կամ կանխելու համար



Ճգնաժամի բացասական հետևանքների նվազեցմանն ուղղված քայլերը

Ինչ քայլեր եք նախատեսում իրականացնել ճգնաժամի բացասական հետևանքները նվազեցնելու կամ կանխելու համար



Ինչպիսին են Ձեր սպասումները ճգնաժամի հետագա զարգացումների վերաբերյալ 2009թ. ընթացքում



- Ճգնաժամը կխորանա, և դրա բացասական ազդեցությունը կլինի էական Հայաստանի տնտեսության և բնակչության կենսամակարդակի վրա
- Ճգնաժամի ազդեցությունն էական չի լինի, քանի որ կառավարությունը կարող է մեղմել դրա ազդեցությունը
- Ճգնաժամը կհաղթահարվի մոտակա մի քանի ամիսների ընթացքում, որի համար, վստահ եմ, կան անհրաժեշտ ռեսուրսներ


Բովանդակություն

- ❑ **Ճգնաժամի ազդեցությունը տնային տնտեսությունների վրա**
- ❑ **Ճգնաժամի ազդեցությունը մասնավոր հատվածի վրա**

- ❑ **Ճգնաժամի ազդեցությունը մակրոտնտեսական համակարգի վրա**

ՀՆԱ դինամիկան


- ՀՆԱ աճի տեմպը 2008թ. հուլիսից սկսել է նվազել, իսկ սկսած 2009թ. հունվար-փետրվար ամիսներին գրանցվել է ՀՆԱ անկում:
- Գրանցվել է անկման տեմպի ավելացում վերջին երեք ամիսների ընթացքում:



ՃԳՆԱԺԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Տնտեսության ճյուղերի դինամիկան

- Տնտեսության ճյուղերից ամենամեծ անկումը գրանցվել է էներգետիկայի, հանքարդյունաբերության և շինարարության ոլորտներում:
- Գրեթե անփոփոխ են մնացել սննդի արդյունաբերության աճի տեմպերը: Դրա հնարավոր պատճառներից է ճգնաժամերի ժամանակ հաճախ նկատվող որոշ փոքրաթեք եւ բազային ապրանքների նկատմամբ պահանջարկի աճը, ինչի մասին անուղղակիորեն վկայում է նաև մանրածախ առևտրի ծավալների աճը 2009թ. հունվար-մարտին: Մյուս հնարավոր պատճառներից է ստվերի կրճատումը: Որոշակի դեր է խաղացել նաև ներմուծման փոխարինման էֆեկտը, մարտին դրամի արժեզրկման արդյունքում: Ամենազգալի աճը գրանցվել է ծխախոտի արդյունաբերության բնագավառում:




Գների դինամիկան

- 2009թ. սկզբից գրանցվել է գնաճի տեմպի անկում, որն արդյունք էր համաշխարհային շուկայում գների ընդհանուր անկման, հատկապես, էներգակիրների: Սկսած ապրիլից այն հակադարձվել է, դրամի արժեզրկման հետևանքով ներմուծված ապրանքների թանկացման արդյունքում:

Սպառողական գների ինդեքս

%-ային փոփոխությունն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ




Ֆինանսավարկային հատված

- Չնայած անկայուն և անորոշ տնտեսական իրավիճակին ավանդների ընդհանուր մակարդակը գրեթե անփոփոխ է մնացել, սակայն էական փոփոխություն է դիտվել դրանց կառուցվածքում:
- Ավանդների կառուցվածքում 2008թ սեպտեմբերից ի վեր կտրուկ փոփոխվել է դրամով և դոլարով ավանդների համամասնությունը ի օգուտ արտարժույթով ավանդների:
- Դեդոլարիզացիայի քաղաքականության արդյունքում հաջողվել էր արտարժույթով ավանդների կշիռը հասցնել մինչև 35%, որը սակայն 5 ամսվա ընթացքում նորից բարձրացավ՝ հասնելով 72%-ի:

«Քանկերում ավանդների դինամիկան և կառուցվածքը


Մլն. դրամ



Ժամկետանց վարկեր

- Վարկավորման ընդհանուր ծավալը, որը կտրուկ աճել էր նախորդ երկու տարվա ընթացքում, կրճատվել է սկսած 2009թ. հունվարից ամսեկան 1-2%-ով:
- 2009թ փետրվարին ժամկետանց վարկերի ծավալը կրկնապատկվել է 2008թ դեկտեմբերի համեմատ:
- Բանկերի ժամկետանց վարկերի ծավալներն սկսել են աճել 2008թ.մարտից, որը որոշակիորեն նվազել է նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Դա մասամբ պայմանավորված էր բանկերի կողմից առկա ժամկետանց վարկերի վերաֆինանսավորման հետ:
- Ժամկետանց վարկերի 95%-ը կազմում են կարճաժամկետ վարկերը:
- Չնայած երկարաժամկետ վարկերը բավականին փոքր տեսակարար կշիռ ունեն ժամկետանց վարկերի կազմում, այնուամենայնիվ, 2009թ. մարտին դրանց կշիռը որոշակիորեն ավելացել է:

Ժամկետանց վարկերի դինամիկան




Արտահանման և ներմուծման դինամիկան

- 2009թ արտահանումը և ներմուծումը շեշտակի անկում են ապրել:
- Ներմուծման մեջ 30%-ով նվազել է պատրաստի սննդի արտադրանքի և մոտ 20%-ով հանքահումքային արտադրանքի ծավալները:
- Արտահանման կառուցվածքում հանքահումքային արտադրանքի ծավալը կրճատվել է 70%-ով՝ պայմանավորված պղնձի և մոլիբդենի միջազգային գների կտրուկ անկմամբ, իսկ պատրաստի սննդի արտադրանքինը՝ 40%-ով : Ոչ թանկարժեք քարերի և մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանումը կրճատվել է մոտ 50%-ով:

«Արտաքին առևտրի դինամիկան

%-ային փոփոխությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ




Մասնավոր փոխանցումներ


- Մասնավոր տրանսֆերտների եռամսյակային ցուցանիշներն աճել են նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածների նկատմամբ, ներառյալ եւ IV եռամսյակը:
- Սակայն ակնհայտ է տարվա վերջին աճի տեմպի նվազման միտումը: 2008թ. վերջին եռամսյակում աճը կազմել է միայն 15%, որը կազմել է նախորդ եռամսյակների աճի միայն կեսը:

Մասնավոր փոխանցումների ներհուսքը 2008թ.-ին

%-ային փոփոխությունն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ




ՃԳՆԱԺԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ



Ճգնաժամի ազդեցության արագ տեղափոխումը Հայաստան ցույց տվեց վերջինիս բավական խոցելիությունն արտաքին շոկերի նկատմամբ: ՀՆԱ անկումը Հայաստանում սկսել է ԱՄՆ եւ Եվրոպայի ՀՆԱ-ների անկման հետ միաժամանակ: Նույնիսկ Ռուսաստանի տնտեսությունը այդքան արագ անկում չարձանագրեց (թեպետ 2009թ. I եռամսյակում տնտ. անկումը այնտեղ ավելի խորը եղավ):

%-ային փոփոխություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ



Հայաստան. Ճգնաժամի առանձնահատկությունները

- Ի հակադրություն տարածված կարծիքի, թե թույլ ինտեգրացվածությունը միջազգային շուկաներին Հայաստանի տնտեսությանը ներհատուկ “իմունային” հակազդող կարգավորիչ է, ճգնաժամի արագ տարածումը ցույց տվեց, որ մեր տնտեսության փոխառնչությունները համաշխարհային տնտեսության հետ բավական ուժեղ են՝ թեպետ յուրահատուկ մեխանիզմների միջոցով:
- Տարածման արագությանը նպաստեց նաև տնտեսության ցածր դիվերսիֆիկացման աստիճանը, մասնավորապես, արտահանման կենտրոնացվածությունը հանքահումքային արտադրանքների մեջ, ինչպես նաև մեծ կախվածությունը մասնավոր տրանսֆերտներից:
- Ի տարբերություն այլ երկրների, որտեղ ճգնաժամը սկիզբ առավ ֆինանսական շուկայում ցնցումներից, Հայաստանում այն սկսվեց իրական հատվածում, որը պայմանավորված էր պղնձի եւ մոլիբդենի միջազգային գների կտրուկ անկմամբ 2008թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսներին:
- Տնտեսական անկման հետագա խորացումը խթանեց մասնավոր տրանսֆերտների նվազումը և շինարարության ոլորտում կտրուկ անկումը:
- Մարտի սկզբին իրականացված դրամի արժեզրկումն արդեն դրական ազդեցություն է ունեցել որոշ ճյուղերի տեղական արտադրության ծավալների վրա, որը, թերևս, ավելի մեծ չափով կարտացոլվի երկրորդ եռամսյակի ցուցանիշներում:
- Բանկային համակարգի տնտեսության մեջ մասնակցության ցածր աստիճանը զերծ պահեց Հայաստանի ֆինանսական համակարգը ցնցումներից ճգնաժամի առաջին փուլում:

Ֆինանսական ճգնաժամերը հավերժ չեն

Խոշոր ֆինանսական ճգնաժամերին հետևող անկումները շատ ավելի երկար են տևում, քան սովորական տնտեսական անկումները, և, որպես կանոն, առավել վնասաբեր են: Եթե ԱՄՆ-ն հետևի նախկին ճգնաժամերի հետագծին, որը որպես կանոն տեղի է ունենում, ապա կպահանջվի մոտ չորս տարի, որպեսզի ՀՆԱ-ն վերադառնա նախաճգնաժամային մակարդակին:

Քեննեթ Ռոզոֆֆ և Կարմեն Ռեյնհարթ

Ելնելով Հայաստանի տնտեսության արագ արձագանքելու յուրահատկությունից կարելի է ենթադրել, որ վերականգնումը արագ կարող է տեղի ունենալ խոշոր տնտեսությունների վերականգնմանը զուգընթաց:

«Տնտեսություն և արժեքներ»-ը հետազոտական եւ գործնական նախաձեռնությունների կենտրոն է, որն առաջնորդվում է մրցունակ Հայաստան ունենալու տեսլականով: «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի (կարճ՝ EV) գործունեության առանցքներն են մրցունակության հայեցակարգի ուսումնասիրությունն ու խթանումը, տնտեսական քաղաքականության և ռազմավարության ոլորտներում ներկայիս և ապագա առաջնորդների ուսուցումն ու խորհրդատվությունը, ինչպես նաև զարգացման արժեքային և մշակութային հիմնասյուների ուսումնասիրությունը:

Կենտրոնը հիմնադրվել է 2004 թվականին : Բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով կենտրոնը ներմուծում է զարգացման նոր հայեցակարգեր և նպաստում է գիտության և բիզնես ոլորտների համագործակցությանը՝ բիզնեսի և սոցիալական միջավայրի բարելավման նպատակով:

Լինելով Համաշխարհային տնտեսական ֆորումի և Հարվարդի ռազմավարության և մրցունակության ինստիտուտի գործընկեր, հրատարակում է ազգային մրցունակության ամենամյա զեկույցը և ուսումնասիրում սփյուռքի ցանցերի, օտարերկրյա ներդրումների և արժեքների հետ կապված հարցերը:

www.ev.am

www.evconsulting.am

Ռազմավարական խորհրդատվություն

- Մրցունակ ռազմավարության ձևավորում
- Մրցակցային վերլուծություն
- Բիզնես պլանավորում
- Հավասարակշռված հաշվեցուցակների (Balanced Scorecard) համակարգի ներդրում

Մարքեթինգային խորհրդատվություն

- Շուկայի հետազոտություններ և վերլուծություններ
- Շուկա մուտք գործելու և ընդլայնման ռազմավարությունների մշակում
- Շուկայական դիրքավորման պլանավորում
- Շուկայական գնում (դյու դիլիջենս)
- Բրենդի գնահատում և համեմատական վերլուծություն
- Գովազդային արշավի արդյունավետության գնահատում
- Սպառողների բավարարվածության և հավատարմության գնահատում

Ներդրումային խորհրդատվություն

- Ներդրումային ռազմավարությունների ձևավորում և ներդրումային նախագծերի մշակում
- Ֆինանսական վերլուծություն և պլանավորում
- Իրագործելիության ուսումնասիրություններ, բիզնեսի գնահատում, ֆինանսական գնում
- Կապիտալի ներգրավում (բաժնեմասային, պարտքային և խառը ֆինանսավորում)
- Բանակցությունների և գործարքի կնքման գործընթացների աջակցություն

Կազմակերպական կառուցվածքի ձևավորում

- Առանցքային բիզնես գործընթացների բացահայտում և կատարողական հիմնական ցուցանիշների սահմանում, ինչպես նաև վերջիններիս ներդրում կառավարման համակարգում
- Դերերի և պարտականությունների սահմանում կազմակերպական կառուցվածքի տարբեր մակարդակներում
- Միջգործառության և ուղղահայաց գործառնական հոսքերի օպտիմալացում
- Հաճախորդների ռազմավարությանը լավագույնս համապատասխանող արդյունավետ կազմակերպական կառուցվածքի մշակում
- Կորպորատիվ կենտրոնի կամ հոլդինգային կառուցվածքի մշակում դիվերսիֆիկացված ընկերությունների համար